№ 66 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 9 **1899** ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 9 № 66

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Տիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական պարտաւորութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կառավարչական հաղորդագրութիւն. Իշխան Իլիա Ճավճավաձէ և հայերը. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Դէրբէնտից. Նամակ Թէոդոսիայից. Նամակ Փոթիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց կառավարութիւնը և Վանի սովը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

—

Ռուսաց բանաստեղծ Պուշկինի ծննդեան հարիւրամեայ յոբելեանի առիթով ծրագրվում են մի շարք ձեռնարկութիւններ։ Մի տեղ բացում են ուսումնարան Պուշկինի անունով, մի ուրիշ տեղ հիմնում են գրադարան, տպագրում են բանաստեղծի երկասիրութիւնները, էժան գնով ծախելու համար, կանգնեցնում են Պուշկինի արձանը, հրատարակում են ժողովածուներ Պուշկինի պատուին։ Նոյն նպատակով Օդեսա քաղաքի ժուրնալիստներից մէկը, Նավրօցկի, առաջարկեց հիմնել Պուշկինի անունով մի ապաստարան գրական գործողների համար։ Առաջարկութիւնը մեծ համակրութիւն գտաւ, ժողովվեց կարճ միջոցում 20,000 ռուբլուց աւելի մի գումար, քաղաքային դումման խոստացաւ ապաստարանի համար տալ քաղաքային հողերից մի ընդարձակ տեղ։ Նավրօցկի յոյս ունի, որ նուիրաբերութիւնները կը շարունակվեն և կը հասնեն պատկառելի գումարի։

Եթէ գրական գործողները մինչև վերջին ժամանակներս առանձին հոգածութեան և ուշադրութեան առարկայ չէին դարձել Ռուսաստանի հասարակական շրջաններում՝ դա ունէր իր հասկանալի պատճառները։ Գրական գործողները մեծ մասամբ ունենում էին ուրիշ պաշտօններ, և նուիրում էին գրականութեան միայն իրանց ազատ ժամերը։ Գրական աշխատանքից ստացած եկամուտը համարվում էր միայն մասնաւոր, երկրորդական և լրացուցիչ մի եկամուտ, որ կարող էր լինել և չը լինել։ Սակայն ժամանակը փոխեց այդ դրութիւնը։ Գրականութեան, ամսագրական և օրագրական մամուլի զարգացումը պահանջեց, որ գրական աշխատաւորները դառնան մշտական և մը-տնեն նոր տեսակի պաշտօնեաների շարքի մէջ։ Միւս կողմից՝ գրական պարապմունք սիրող անձինք տեսնելով, որ գրական աշխատանքը կարողանում է փոքր ի շատէ բաւարար կերպով վարձատրվել՝ համարձակութեամբ իրանց նուիրեցին սիրած գործունէութեան։

Սակայն տարիներ անցնելուց յետոյ, երիտասարդ գրողը յոգնում էր, սպառվում, կորցնում իր թարմութիւնը և աշխոյժը և կամաց-կամաց դառնում անընդունակ գործելու։ Այժմ, երբ գրական գործողների թիւը մեծացել է, երբ արդէն բազմաթիւ դժբախտ դէպքեր են տեղի ունեցել, որ գրական գործողը անց է կացրել իր ծերութեան օրերը մեծ կարօտութեան մէջ և մեռել է մոռացութեան մէջ՝ հիմնվում են մի շարք հաստատութիւններ գրագէտներին օգնելու նպատակով։ Կառավարութիւնը յատկացրեց խոշոր գումար այդ նպատակով. ռուսաց գրագէտների դաշնակցութիւնը և գրական ֆոնդը օգնում են կարօտեալներին. նոյնիսկ մեր հայոց գրական գործողների համար գոյութիւն ունի Ս. Շահազիզի հիմնած Աբովեան-Նազարեան գրական ֆոնդը։ Օդեսայի փորձը փոքր ինչ ուրիշ բնաւորութիւն ունի, բայց ծառայում է նոյն նպատակին։ Օդեսայի ապաստարանը պէտք է բովանդակէ իր մէջ գրադարան-ընթերցարան, դպրոց, արհեստանոց, և եթէ ներեն միջոցները՝ պարտէզ։ Այդտեղ զառամեալ և յոգնած գրականագէտները պէտք է, նայած իրանց առողջութեան վիճակին, կա՛մ օգտվեն ապաստարանից բոլորովին ձրիապէս և կամ ստանձնեն որևէ պաշտօն, օրինակ ուսուցչութիւն ապաստարանի դպրոցում։

Անկասկած, գրական գործողների նիւթական ապահովութեան հարցը համակրութիւն կը գտնէ հասարակութեան մէջ, և բարեգործների նուիրաբերութիւնների մի մասը կը յատկացվի այդ նպատակին։ Գրականութիւնը ընդհանրապէս և մասնաւորապէս շատ մեծ դեր են խաղում ժամանակակից կեանքի մէջ, և նրա գործողների վիճակը չէ կարող առանց ուշադրութեան մնալ հասարակութեան կողմից, որ այնքան օգտվում է մտաւոր ոյժերի գործունէութիւնից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Կ. Պոլսի հայերի մէջ էլ սկսեց արծարծվել կլասիկական և ռէալական կրթութեան հարցը. մի հարց, որ այժմ զբաղեցնում է ամբողջ Եւրոպայի հասարակական գործիչների միտքը։ Թիւրքահայոց մտաւոր կենտրոնում այժմ հասկանում են, որ ֆրանսիական կրթութեան սիստէմը այն է միայն տալիս դպրոցականներին, որ նրանք, իրանց կրթութիւնը վերջացնելուց յետոյ, չափչփում են մայրաքաղաքի փողոցները, յոյս ունենալով, որ ամենամեծ երջանկութիւնը նա, որ միակ մատչելի է այդ դպրոցների սաներին՝ երբ և իցէ կիրականապ։ Եւ դիտէք ինչ երջանկութիւն է դա։—Գրագրի պաշտօն ստանալ մի որևէ վաճառականի մօտ։ Եւ ինչո՞ւ զարմանալ որ այդպէս է՝ քանի որ Ֆրանսիան, այն երկիրը, որ կրթական տիպար է թիւրքահայերի համար՝ նոյն դրութիւնն է ներկայացնում, նոյնպէս անգործ երիտասարդների մի հայրենիք է։ «Ի՞նչ խեղճութիւն», բացականչում է «Սուրհանդակ» լրագիրը Ֆրանսիայի մասին, բայց շտապում է աւելացնել.

Այդ խեղճութիւնը շատ աւելի մորմոքիչ հանգամանք մը առած է մեր մէջ, և մեզ անկ չէ ֆրանսացիի վրա խղճալ, մինչ մենք մեր ցաւը ունինք արդէն։

Բայց ցաւը անդարմանելի չէ. անշուշտ կան երկիրներ, ուր ֆրանսիական սիստէմը չէ խեղճացնում հարիւրաւոր երիտասարդներին։

Ի՞նչ կընէ սակայն գերմանացին, որուն ճարպիկութիւնը առածի կարգ անցած է, և որ Թիւրքիոյ գեղեցիկ երկրին մէջ ամեն օր նոր նոր յաջողութիւն ձեռք կը բերէ. այնպէս որ մենք եթէ դեռ չարունակենք մեր նախապատմական ուղղութեան մէջ մնալ, իրաց բընական ընթացքով, շատ չանցած պիտի տեսնենք, որ առևտրի բոլոր կարևոր ճիւղերը անցեր են Ցետոնեան դիւրաթեք ցեղին ձեռքը, ինչպէս մեր ձեռքէն ելած է ժամանակաւ սեղանաւորութիւնը, և մեզի, երկրին բընիկներուն, մնացած են երկրորդական գործերը միայն։

Արդ, պէտք է գիտնալ թէ գերմանացին շատ դրական կրթութիւն մը կառնէ իր ռէալական ուսումնարանին մէջ (ռուսահայ բառով)։ Քերականութիւնը, առևտրական թուաբանութիւնը, կենդանի լեզուները, պատմութիւնը, աշխարհագրութիւնը և տնտեսագիտութիւնը իր դաստիարակութեան գլխաւոր տարրերն են։ Տասնվեց տարեկանն արդէն աւարտած է իր երկրորդական կրթութիւնը և պատրաստ է կեանքի պայքարին մէջ մտնելու։

Միանգամայն ճիշտ է, և մենք միայն շնորհաւորել կարող ենք մեր թիւրքահայ եղբայրներին, որ այդքան լաւ հասկացել են իրանց իրական ցաւը։ Դրական կրթութիւնը կը պատրաստէր մարդիկ կեանքի համար, կը մտցնէր այն իրական ուղղութիւնը, որին այնքան կարօտ է թիւրքահայը։ Գործնական կեանքի և դրականութեան մէջ կը մտցնէր առողջ, կենսունակ հոսանք. թիւրքահայը կը սկսէր ուսումնասիրել իրան և իր շրջապատը, կը հասկանար, կը ճանաչէր իրան, և այն ժամանակ, հաւատացած ենք, Եղիա Տէմիրճիպաշեանների դարը կանցնէր, և շատ քիչ կը մնային մարդիկ, որոնք մեծ գլուղ կը համարէին այդ դրագէտին, որ չէ կարողանում երկու հատ պարզ բառ դնել միմեանց կողքին և չէնքով չնորհքով միտք հասկացնել։ Թող Կ. Պոլսի հայերը յաճախ մտածեն այդ հարցի վրա, և այն ժամանակ նրանց համար էլ կը բացվի ռէալական դարագլուխը, և նրանք էլ մրցակից կը հանդիսանան գործնական գերմանացիների դիմաց։ Չը պէտք է մոռանալ, որ բախտի բերմամբ այսուհետև Թիւրքահայը իր տնտեսական և արդիւնաբերական կեանքի մէջ իր դիմաց պէտք է ունենայ Ցետոնների նման հզօր մրցակիցներ, որոնք բացի դրական կրթութիւնից ունեն և մի տարօրինակ Աւետարան...

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Կայսրութեան մնացած բարձրագոյն դպրոցներում Պետերբուրգի ընկերներին օգնելու համար սկսված յուզմունքը, ուղարկված նամակների և պատուիրակների ազդեցութեան տակ, արտայայտվեց հետևեալում։

Մոսկվա։ Մոսկվայի համալսարանի և ուրիշ տեղական բարձրագոյն դպրոցների ուսանողների մէջ ծագած յուզմունքները սկսվեցին փետրվարի կէսից, Պետերբուրգի անկարգութիւնների մասին ստացված տեղեկութիւններից յետոյ, բայց չնորհիւ ուսումնարանական իշխանութեան և վարչութեան ձեռք առած միջոցներին՝ ամբողջ ամսվայ ընթացքում կարելի եղաւ պահել այն սահմաններում, որոնք հնարաւորութիւն էին տալիս ուսանողութեան խոհեմ մասին այցելել դասախօսութիւնները և շարունակել պարապմունքները համալսարանում։

Շարժման հէնց սկզբում ուսանողութեան շրջանից անջատվեցին աւելի տաքագլուխները, որոնք աշխատում էին սաստկացնել անկարգութիւնները և յուզել իրանց հանդիսատ պահող ուսանողների ահագին մեծամասնութիւնը։ Այդ անձանց գործունէութեան վրա ուշադրութիւն դարձրեց թէ համալսարանական իշխանութիւնը և թէ ոստիկանութիւնը։

Ուշադրութեան առնելով, որ սկսված յուզմունքը ոչինչ տեղական առիթներ չունէր և ծագեց ընկերական օգնութեան հողի վրա, և օգուտ քաղելով բարեկենդանի շաբաթի մոտենալուց, և նոյնպէս ենթադրելով, որ յուզմունքը կը խաղաղվի ինքն իրան մինչև ուսումնարանական պարապմունքների վերսկսվելու ժամանակը՝ վճռվեց, մինչև մեծ պասի հասնելը, ժամանակաւորապէս հեռացնել վերոյիշեալ անձանց թվից 222 հոգու վարչական կարգով ծնողների բնակատեղերը, իսկ համալսարանի վարչութիւնը իր կողմից արտաքսեց 12-ին և արձակեց համալսարանի 162 ուսանողներին, մտադրութիւն ունենալով միջնորդել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի առաջ՝ ակադեմիական կարգը վերականգնելուց յետոյ, դրանց վերադարձնելու մասին։ Ի կատարումն այդ բանի՝ մարտի հէնց 1-ի թվից կարգադրութիւն եղաւ Մոսկվա վերադարձնել վարչութեան հրամանով հեռացրած ուսանողներին, բացի միայն ագիտացիայի մէջ մեղաւորագոյն 16 ուսանողներից, որոնց Մոսկվա մնալն արգելված է մէկ տարի ժամանակով՝ պահպանութեան վերաբերեալ Կանոնադրութեան հիման վրա։

Զրկվելով համախոհների նշանաւոր թվից՝ անկարգութիւնները շարունակելու կողմնակից ուսանողների մի մասը, այնու ամենայնիւ, շարունակում էր ամեն միջոցներով յուզմունքի մէջ պահել ուսանող երիտասարդութիւնը, կանգ առնելով մինչև անգամ ֆիզիքական ներգործութեան սպառնալիքների առաջ (որի և մի քանի օրինակներ եղան) դասախօսութիւններ այցելող ընկերների վերաբերմամբ, որոնց աղդանունները, անկախ սրանից, հրատարակեցին նրանք ընդհանուրի տեղեկութեան համար։

«Համալսարանական ռէժիմի դէմ կռւող խմբի» անունից փետրվարի 20-ին հրատարակած հրաւէրը, որով դիմում է ընկերներին, մատնացոյց անելով, թէ համալսարանը «չը փակվեց», որովհետև հատ-հատ անձինք այցելում են դասախօսութիւնները՝ հետևեալ պահանջներն է դնում. «Ի նկատի ունենալով այն, որ մեր նպատակները անսահման մեծ են համեմատած այդ ուրացողների ստոր դրդումների հետ. ի նկատի ունենալով այն, վերջապէս, որ ծաղր կը լինէր առողջ բանականութեան վրա շրջանի համար այդ վնասակար արարածների վարմունքի վերաբերմամբ գործադրել «հայացքներ» և «համոզմունքների» ազատութեան սկզբունքը՝—մենք խնդրում ենք ընկերներից նրանց վերաբերմամբ հետևեալ միջոցները ձեռք առնել. որոշելով նրանց անձնաւորութիւնը՝ մենք առաջարկում ենք ենթարկել նրանց ֆիզիքական ներգործութեան, այդ դէպքում թոյլատրելի համարելով բոլոր ձևերը և բոլոր ատիճանները, այդ հակահասարակական տարրերի արդէն յայտնի վնասակարութեան պատճառով։ Ցանկալի է միայն այդ բանը անել ամենափոքր բիսկով և զոհերով, այն է առանց վկաների, քիչ անձանց մասնակցութեամբ և այլն, ինչպէս յարմար կերևայ այդ գործի ձեռնամուխ եղողներին»։

Ցուզմունքը իր համար պաշար էր գտնում այն շրջաբերականների և հրաւէրների մէջ, որ հրատարակում էր շարժման գլուխ կանգնած «գործադիր կոմիտեը», նոյնպէս Մոսկվա էին ուղարկվում ուրիշ համալսարանական քաղաքներից։ Մանաւանդ այդ կողմից վնասակար ազդեցութիւն ունէին՝ «Միացեալ դէմլեաչտվոների և կազմակերպութիւնների Կիեվի դաշնակցական խորհուրդի» հրաւէրը, փետրվարի 12-ից, և Մոսկվայում լոյս տեսած շրջաբերականը «Դէպի ուսանող երիտասարդութիւնը», սոցիալիստ յեղափոխականների դաշնակցութեան» անունից։ Առաջին հրաւէրը մատնացոյց էր անում ուսանողական շարժման նպատակների վրա, համարելով այդ «ոչ բոպէական», զայրացած զգացմունքի արագ հանդչող բռնկում, այլ գիտակցական և հաստատ բոլոր ընդհանուր ռէժիմի դէմ, և այն օրվայ «մտիկութիւնը», երբ ուսանողական բոլոքներից կառաջանայ հասարակական շարժում. իսկ «Դէպի ուսանող երիտասարդութիւնը» շրջաբերականը համակրութիւն էր յայտնում ուսանողներին յեղափոխականների կողմից և մատնացոյց էր անում շարժման մեծ նշանակութեան վրա՝ երիտասարդութեան քաղաքական կրթութեան տեսակէտից, որը յետոյ անկասկած այն գիտակցութեան պէտք է հասնէ, թէ անհրաժեշտ է միանալ ներգործական կռուին կառավարութեան դէմ։

Համալսարանում տեղեկութիւններ ստանալով այն բանի մասին, թէ փետրվարի 20-ին Բարձրագոյն հրաման է կայացած Պետերբուրգի անկարգութիւնների պատճառները քննելու համար՝ «գործադիր կոմիտէը» փետրվարի 23-ին մի առանձին հրաւէր հրատարակեց, որով յորդորում էր, թէ անհրաժեշտ է առաջվան տակտիկայով ընթանալ, մինչև որ կը պարզվի գործը և Մոսկվայից աքսորված ընկերները կը վերադարձնվեն. փետրվարի 26-ին նոյնպիսի մի «յայտարարութիւն լոյս տեսաւ Կայսերական տեխնիկական դպրոցի ուսանողների կողմից։

Զը նայելով ուսանողութեան անբարեյոյս մասի մեքենայութիւններին՝ ագիտացիայի նպատակը—փակել համալսարանը—չաջողվեց մարտի սկզբներին, և մեծ պասի առաջին շաբաթվայ երկուշաբթի օրից նշանակված էր պարապմունքների վերսկսելը համալսարանում և ուրիշ բարձրագոյն դպրոցներում, որ ժամանակաւորապէս դադարեցրված էին բարեկենդանի շաբաթվայ առիթով։ Մարտի 1-ին դասախօսութիւններին եկաւ ունկնդիրների համեմատաբար անընչան թիւ (համալսարանում 450, տեխնիկական դպրոցում 100, գիւղատնտեսական ինստիտուտում—25). միևնոյն ժամանակ կուրսերից մէկի բժիշկները, ժողով գումարելով՝ իրանցից մի պատգամաւորութիւն ուղարկեցին ռէկտորի մօտ, յայտնելով, թէ ուսանողները չեն կարող պարապմունքներն սկսել՝ մինչև որ աքսորված ընկերներին չը վերադարձնեն։ Մարտի 2-ին դա-

սախոսութիւնները համալսարանում շարունակվում էին, բացի պրոֆէսոր Սօկոլովսկու դասախոսութիւններից, որի աուդիտորիայում ուսանողները, թւով մինչև 150 մարդ, սկսեցին աղմուկ հանել և աղաղակել, և ապա խմբով հեռացան: Անատոմիական դահլիճում ժողով կայացաւ, մասնակցութեամբ աւելի քան 400 ուսանողների, որը անհրաժեշտ համարեց պահանջել. 1) աքսորված ընկերների վերադարձը և 2) ակադեմիական բնաւորութիւն ունեցող գործերի համար ապագայում չաքսորել ուսանողներին առանց դատաստանի և քննութեան:

(Կը շարունակվի)

ԻՇԽԱՆ ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱՁԷ ԵՒ ՀԱՅԵՐԸ

VII

Գիշմիշեվի անունն էլ գործ է ածվել լոկ թիւաւելացնելու համար, այնպէս, ինչպէս մէջ են բերված Հախվէրդեան, Էմին, Երիցեան: Եթէ գեներալի միակ յանցանքն այն է, որ համարձակվել է ասել, թէ Վրաստանի դրութիւնը փայլուն չէր անցեալ դարի վերջում, հապա ինչ պիտի ասէք հանգուցեալ Պլատոն Իոսելիանիի մասին, որ այնքան ողբալի գոյներով է նկարագրել պատմական այն երկար շրջանը, երբ Վրաստանը կեղեքվում էր, արիւնլուայ էր դառնում մահմեդականացած վրացի թագաւորների և անմիաբան ազնուականների ձեռքից: (Տես Իոսելիանիի «Историческій взглядъ на состояніе Грузіи подъ властью царей-магометанъ, Тифлисъ, 1849): Գիտնական վրացագէտը այս աշխատութեան մէջ լոյս է հանել այնպիսի երկարատև արատներ և յանցանքներ, այնպիսի ամօթալի պատկերներ, որոնց համեմատութեամբ Գիշմիշեվի յիշատակած դէպքերը, աննշան, դատարկ բաներ են: Եւ ինչ: Չը լինի թէ Իոսելիանի նոյնպէս հայ էր կամ կաշառված էր հայ գիտնականներից: Իշխան Ճավճավաձէ չի յանդգնի այսպիսի բան մտքովն անց կացնել: Ով որ հասկանում է անաչառ պատմագրութեան, քննադատութեան պահանջները՝ նա չէ կարող Իոսելիանի չը լինել. միայն իշխանն է, որ ունի իր զարմանալի հասկացողութիւնները պատմագրութեան մասին, և հենց այդ պատճառով նրա և Իոսելիանիի մէջ սարեր ու ձորեր կան: Մենք այդ կը տեսնենք: Առ այժմ հետևենք իշխանի մեղադրական ճառին:

Անցեալ տարի Պետերբուրգում հրատարակվեց Կ. Եղեանի «Сношенія Петра Великаго съ армянскимъ народомъ» մեծ գիրքը: Այդ գործի մասին մենք խօսելու առիթ չենք ունեցել (գիրքը մեր խմբագրութեան չէր էլ ուղարկված): Պ. Եղեան հաւաքել է արխիվներից վերին աստիճանի հետաքրքրական օգուտներ, որոնք մի կատարեալ յեղափոխութիւն պիտի առաջացնեն Կովկասեան հայերի նոր պատմութեան մէջ: Ժողովածուին պ. Եղեան կցել է մի ընդարձակ ներածութիւն, որի մէջ նոր լոյս տեսած գօկումէնտների և այլ աղբիւրների հիման վրա փորձել է պատմական մի ամփոփ տեսութիւն տալ այն յարաբերութիւնների մասին, որոնք սկսվեցին ռուսաց արքունիքի և հայերի մէջ XVIII դարի սկզբից և շարունակվեցին մինչև մեր դարի սկիզբը: Մենք շատ կը չեղվէինք մեր բուն նպատակից՝ եթէ փորձէինք գնահատել այդ տեսութիւնը իբրև պատմական մի լուրջ ուսումնասիրութիւն, ցոյց տայինք նրա արժանաւորութիւնները, որոնք անուրանալի են, և պակասութիւնները, որոնք անխուսափելի են: Թողնենք այդ:

Խօսելով Կովկասեան հայերի մասին՝ պ. Եղեան, բնականաբար, պիտի յիշատակէր և վրացիներին: Այս երկու ազգերը դրացի էին, միևնոյն դժբախտ հանգամանքների տակ էին հեծում, միևնոյն շահերն ու ակնկալութիւններն ունէին: Իշխան Ճավճավաձէ, հաւատացած լինելով, որ հայ գիտնականը վրացու անխնայ թշնամին է՝ չէր ուզի որ պ. Եղեան խօսէր վրացիների մասին: Եւ նա ունի իր պատճառաբանութիւնները, որոնց կը դիմենք մենք, պահպանելով անաչառ ընթերցողի դիրքը և ի նկատի ունենալով, որ պ. Եղեան կենդանի է, կարող է ինքն էլ պատասխանել՝ եթէ, ի հարկէ, հարկաւոր համարէ:

Ամենից առաջ իշխան Ճավճավաձէ գանգատվում է, որ պ. Եղեան չէ ընդունում, որ անցեալ դարում եղած լինի վրաց թագաւորութիւն: Դա ճշմարիտ է, թէև ոչ ամբողջապէս: Պ. Եղեան հետևել է այսպիսի ուղղութեան: Այն ժամանակից, երբ Հերակլ II դաշնակցութիւն կապեց ռուսաց արքունիքի հետ (Պոտեմկինի ժամանակ), որով նա ստանում էր թագադրվելու իրաւունք (երես XCIII), պ. Եղեան ամեն տեղ Հերակլին և նրա որդի Գիորգիին անուանում է թագաւոր: Իսկ դրանից առաջ նա, ճիշտ որ, չէ ընդունում վրաց թագաւորութիւն և նոյն-իսկ բացարձակ կերպով ասում է, որ Հերակլ իրաւունք չունէր թագաւորական տիտղոս խնդրել ռուսներից, քանի որ նա այդ բանը չունէր Պարսկաստանում:

Տեսնենք ինչ են ասում պատմական փաստերը: Դուբրովին (տես «Георгій XII», երես 13) ասում է, որ մինչև պարսից Սէֆէվին շահերի հարստութեան ոչնչանալը՝ Վրաստանը գտնվում էր շահի իշխանութեան տակ: Պարսկաստանի ինքնակալը թագաւոր էր նշանակում՝ ում կամենում էր, բայց Բագրատիոնների տոհմից: Վրաց թագաւորը ռոճիկ էր ստանում շահից. Թիֆլիսում գտնվում էր պարսից բերդապահ զօրքը: Միւս կողմից յայտնի է, որ պարսիկները վրաց թագաւորներին ճանաչում էին «Գիւրջիխան» անունով. այդ թագաւորները ընդունում էին մահմեդականութիւն, ստանում էին մահմեդական անուններ, որոնց միշտ կցրած էր «խան» անունը: Եւ սակայն գիւրջիխանները չէ կարելի ասել թէ միշտ զրկված էին թագաւորական տիտղոսից թէ Վրաստանում և թէ նոյն-իսկ հայերի մէջ: Առաքել պատմագիրը իր ժամանակակից Վրաստանում միայն թագաւորներ է ճանաչում. նրանից յետոյ Զաքարիա պատմագիրը արդէն գործ է ածում միայն Վալի և Խան տիտղոսները, այն էլ միայն իր ժամանակակից վրաց թագաւորների վերաբերմամբ: Աղուանից Եսայի կաթողիկոսը իր պատմագրութեան մէջ ամեն տեղ թագաւոր անունն է տալիս այն Վախտանգին, որ պ. Եղեանի գրքում միայն Վալի է անուանված, թէև նոյն Եսային Կախեթի կառավարչին, որ Քարթալինիայի իշխողի հետ հաւասար իրաւունքներ ունէր՝ անուանում է միշտ Մհամմադ-Ղուլի խան: Աբրահամ կաթողիկոսը Նադիր-Շահի թագադրութեան ներկայ եղող իշխանաւորների մէջ յիշում է Թիֆլիսի Վալին և ցոյց է տալիս, որ դա յաժենայն դէպս մի հասարակ խան չէր: «Եւ Վալի վասն այն ասեն՝ զի յետ Շահին նա միայն կարէ դնել ի գլուխն իւր ճղայ, որպէս թէ երկրորդ շահին»:

Տարակուսանքները վերանում են. եթէ պարսից արքունիքը թագաւոր չէր անուանում Վրաստանի գլխաւոր կառավարչին՝ դա, երևի, այն է նշանակում, որ գոռող պարսիկների համար միայն մի թագաւոր կար, և դա շահն էր: Միւս կողմից, ինչպէս վկայում է և Դուբրովինը վրաց Ալէքսանդր թագաւորը Նադիր-Շահի թոյլտուութեամբ թագ դրեց իր գլխին Մցխեթի եկեղեցում: Ինքը, պ. Եղեան բերել է (եր. LXXXIX) կոմս Տօտլէբէնի խօսքերը. «Съ царя Ираклія орденъ снятъ»: Հետևաբար, որքան և պաշտօնական-ձևական կողմից հիմք կայ վրաց թագաւորներին խան և վալի անուանելու՝ բայց նկատի առնելով մեր բերած հաստատութիւնները՝ կարելի էր և թագաւոր անունը գործ ածել, մի անուն, որ, ի հարկէ, այս դէպքում չէր նշանակում, թէ երկիրը կատարելապէս անկախ է և ինքնագլուխ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Վախտանգը պ. Եղեանի հրատարակած գօկումէնտների մէջ միայն «մեծ իշխան», «խան», «վալի» է անուանված, մինչդեռ Եսային, որ այդ թղթերը գրողների ժամանակակիցն ու գործակիցն էր՝ նրան թագաւոր է անուանում: Սա գուցէ այն է ցոյց տալիս, որ վրաց թագաւորները իրանց երկրում իրանց թագաւոր էին անուանում, մինչդեռ պաշտօնական գրութիւնների մէջ իրանց պաշտօնական տիտղոսն էին կրում: Ինչ էլ լինի՝ այս հանգամանքի բացատրութիւնը կարող է լոյս սփռել վրաց պատմութեան այս շրջանի վրա:

Իշխան Ճավճավաձէի երկրորդ գանգատն այն է, որ պ. Եղեան հարկաւոր է համարել դնել իր տեսութեան մէջ ճանապարհորդ Շարդէնի մի կարծիքը, որ շատ աննպաստ է վրացիների համար: Ի՞նչ կարիք կար այդ վկայութիւնը բերելու, ասում է իշխանը: Մենք ևս այդ բանը աւելորդ ենք համարում, և այդ ոչ թէ այն պատճառով, որ իշխան Ճավճավաձէ զանազան առասպելական կարծիքներ ունի հայ «զունդիի» մասին և ամեն տեղ նրա սարքած «օյինբազութիւններն» է տեսնում, այլ լոկ արդարութեան տեսակէտից: Մի ժողովրդի բարքն ու վարքը ուսումնասիրելու համար հարկաւոր է տարիներով ապրել նրա հետ, մօտիկ ծանօթանալ նրա դրութեանը, կեցութեան հանգամանքներին, մտնել նրա հոգու մէջ: Կարող է այդպէս անել մի ճանապարհորդ: Ոչ, նա բօպէական տպաւորութիւնների տակ, զանազան անձնական հանգամանքներից, այս կամ այն տրամադրութիւնից է դուրս բերում իր վկայութիւնները: Եթէ դուք ուզում էք ժողովրդի բարոյական պատկերը տալ՝ չը պիտի բաւականանաք մի ժամանակակից ճանապարհորդի կարծիքը մէջ բերելով. այդ կարծիքը կարող է ճիշտ լինել ճանապարհորդին հանդիպած մի քանի մարդկանց, մի գիւղի, մի քաղաքի վերաբերմամբ, բայց մի ամբողջ ազգի մասին դրանով հաւակացողութիւն կազմել տալը՝ շատ անարդար բան կը լինի: Ի՞նչ կասէք, եթէ մի քանի տարիներից յետոյ մէկը վեր կենար ու հայոց ազգի բարոյականը ցոյց տալու համար բերէր մի պաստօր Նաումանի գրածները: Չը պէտք է մոռանալ և այն, որ շատ անգամ մի և նոյն ճանապարհորդը մի այլ տեղում ուրիշ տեսակ վկայութիւն է տալիս: Այսպէս, Պլատոն Իոսելիանի, վրաց ժողովրդի բարոյական ոյժը ցոյց տալու համար, բերում է նոյն Շարդէնից վկայութիւն այն մասին, թէ ինչպէս Թիֆլիսում ժողովուրդը զէնք վերցրած չէր թոյլ տալիս, որ պարսիկները մզկիթ կառուցանեն: Եւ այստեղ թէև չէ յիշած, որ ժողովուրդը վրացիներից էր բաղկացած՝ բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է այդ. Զաքարիա պատմագիրն էլ յիշում է, թէ ինչպէս Թիֆլիսի հայերն ու վրացիները միացած պաշտպանում էին քրիստոնէութիւնը մահմեդականութեան դէմ:

Պ. Եղեան Շարդէնի խօսքերը բերել է՝ ցոյց տալու համար, թէ որպիսի անբարոյականացնող ազդեցութիւն էր գործում պարսից իշխանութիւնը Վրաստանում: Այո, դա ճիշտ է. մահմեդական լուծի ամբողջ հրէշաւոր ոյժը Վրաստանում աւելի խիստ է արտայայտվել, քան դուցէ մի այլ տեղ: Բայց միթէ միւս տեղերում այդ ռէժիմը վարդ ու ծանիչակ էր բուսցնում: Ամեն տեղ եղել են անբարոյականացած դասակարգեր, բայց և այնպէս եղել է մի տարր, մի հզօր ու դիմացկուն միջուկ, որ կուլ չէ գնացել, որ պահել է իր բարոյական ինքնուրոյնութիւնը: Եւ դա ժողովուրդն է: Եթէ Վրաստանում չը լիներ այդ տեսակ մի բարոյական մեծ ոյժ՝ անհնարին կը լիներ այն արիւնոտ, սև ժամանակներում պահպանել կրօն և ազգութիւն:

Սա շատ պարզ է: Անցնենք: Լ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Ապրիլի 5-ին

Այսօր, ամենայն հայոց Կաթողիկոսը, այստեղ ժամանելու իններորդ օրը, առաւօտեան ժամը 9-ին, մեկնեց այստեղից Մաստարայի ճանապարհով դէպի Էջմիածին: Ութ օր մնալով Ալէքսանդրօպօլում՝ Վեհափառը այցելեց քաղաքիս բոլոր լուսաւորչական եկեղեցիները և բազմաթիւ ունկնդիրների առջև քարոզներ խօսեց: Նրա բոլոր քարոզների բնաբաններն ու աղբիւրը՝ Աւետարանն էր, և հայոց եկեղեցու պատը ամեն անգամ դառնալով դէպի ժողովուրդը՝ յորդորում էր «սիրել միմեանց»: Բացի հայ հասարակութեան զանազան դասակարգերի և պաշտօնակատար մի քանի անձանց ներկայանալը, ներկայացան նաև քաղաքիս հայ կաթոլիկ, յոյն և պարսիկ համայնքները: Վեհափառն ընդունեց նրանց սիրով, խօսեց ամեն մի համայնքի հետ առանձին-առանձին. յիշեց հայերի և պարսիկների մէջ եղած սերտ բարեկամական կապերը և երկու հարևան ազգերի միմեանց վրա գործած ազդեցութիւնները:

Շաբաթ օր, Վեհափառի ծննդեան տարեդարձի նախընթաց օրը, տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ ս. Աստուածածին եկեղեցում, ուր ներկայ եղաւ և ինքը: Պատարագից յետոյ յաջորդարանում Վեհափառին ներկայացան քաղաքագլուխը, գաւառապետի պաշտօնակատարը և մի խումբ երիտասարդներ և շնորհաւորեցին Վեհափառին իր ութսուներորդ տարեմուտը: Այդ օրը եկեղեցում ժամերգութիւնը կանոնաւոր էր. երգում էր պ. Բրուտեանի պատրաստած խումբը: Իսկ երեկոյեան ժամը 8-ին, յաջորդարանի դահլիճում, բոլոր դասակարգերից բաղկացած մի փոքրաթիւ հասարակութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ մի շատ հաճոյք երեկոյթ: Պ. Ա. Բրուտեանի համերգի համար պատրաստած երեսուն հոգուց բաղկացած երկու սեռի խումբը երգեց մի քանի ժողովրդական երգեր: Վեհափառը բարեհաճել էր ներկայ լինել, և ամեն մի երգից յետոյ խօսում էր երգի յիշեցրած տպաւորութիւններից: Վեհափառի տրամադրութիւնը ըստ երևոյթին այդ օրը խիստ լաւ էր: Նա չէր դադարում զուարճախօսութիւններ անելուց: Երգիչներից մէկի, պ. Գեատուկեանի ժողովրդական երգերն այնքան դուր եկան Վեհափառին, որ օրհնեց նրան և հետաքրքրվելով նրա մասին՝ լսեց որ Գեատուկեան հին ուսուցիչ է եղել, և երբ հարցրեց թէ «այժմս ինչ գործ կընես» նախկին ուսուցիչը վստահութեամբ պատասխանեց. «այժմս ջրաղացպանութիւն եմ անում, Վեհափառ տէր»: «Աղէկ է, շարունակեց Վեհափառը. լսել է՝ դուն ալ Մովսէս Խորենացի մըն ես. ես ալ Էջմիածնի լճի մօտ մի ջրաղաց եմ չինել տուեր. քեզի կը տանիմ անտեղ, դու էլ լճին բոլոր երգէ, ջրաղացդ ալ ինքնին հոն կը բանի»: Յետոյ դառնալով դէպի ժողովուրդը՝ Վեհափառն ասաց. «Էֆ, քիչ մ'ալ դուք խօսեցէք, աս ալ եկեղեցի խօ չէ, որ միայն ես խօսիմ ու դուք ականջ ընէք. պարոն քաղաքապետ, դու ճարպիկ խօսող մըն ես»: Բայց ընդհանուր ծիծաղից յետոյ խօսողներ չեղան:

Ապա դառնալով տեղիս յայտնի Մխիթար վարդապետին՝ Վեհափառը հարցրեց. «Մխիթար վարդապետ, աս օրիորդներուն բան մը պիտի ընծայես թէ ոչ. ինձմէ որ սպասելիք չունենաք»: «Այո, Վեհափառ տէր, պատասխանեց վարդապետը. նրանք իրանց վարձատրութիւնը կստանան»: Վեհափառը օրհնեց բոլորին, երգեցիկ խմբին, շնորհակալ եղաւ այդ հաճոյաստ շնորհաւորութեան համար և հեռացաւ դահլիճից: Երգող օրիորդներին և տղաներին քաղցրեղէն բաժանեցին, և ժողովականները ցրվեցին:

Երէկ Վեհափառը կառքով այցելեց այստեղից եօթը վերստ հեռաւորութեան վրա գտնված Ղանլիճայի վանքերը. այնտեղ մնաց մի քանի ժամ և բազմաթիւ կառքերի ու ձիաւորների հետ ժամը 2-ին նորից վերադարձաւ Ալէքսանդրօպոլ: Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԴԷՐԲԷՆՏԻՑ

Ապրիլի 1-ին

Եթէ կան աշխարհիս երեսին յետ ընկած քաղաքներ, որտեղ տիրում է թմբութիւն, ուր հասարակական կեանքը մեռած է՝ դրանցից մէկն էլ մեր Դէրբէնտն է: Հասարակական կեանքի ոչ մի նշոյլ. ամեն բան մոռացված, բոլորը, ինչ որ կարող էր արթնացնել հասարակական կեանքը՝ ոտի տակ է տուած,—ահա թէ ինչ է ներկայացնում Դէրբէնտը: Սրանից աւելի հեռու չէ կարելի գնալ հասարակական կեանքը մեռնելու, արմատախիլ անելու հարցում: Տեղական մի բուռն ինտելիգենցիան, որ գլխաւորապէս բաղկացած է ծառայողներից՝ զբաղված է օրվայ մանր-մունր հարցերով, բամբասանքներով և, շատ-շատ, դրանցից ոմանք նստած իրանց տներում բաւականանում են լոկ հռհռան բառեր արտասանելով, կամ հեռու անկիւնում, որ ոչ ոք չը լսէ՝ զբաղվում են այս տեսակ մեռելային դրութիւնը պախարակելով:

Իսկ խօսքից գործի անցնել չը կայ: Հասարակ ժողովուրդը, որ առհասարակ սպասում է հասարակական գործերում ինտելիգենցիայի նախաձեռնութեան՝ յուսահատված, մատնել է իրան այնպիսի մի մեռելային դրութեան, որ գուցէ հրաշքներ հարկաւոր լինեն նրան արթնացնելու համար: «Մի ժամանակ, ասում է դէրբէնցին, երբ գոյութիւն ունէր այս-ինչ այն-ինչը՝ հասարակական կեանքը մեզանում այսպէս մեռած չէր. բայց այժմ, երբ կենդանանալու ճանապարհները կտրված են, ինչպէս չը մեռնի այդ կեանքը, ինչ միջոցով զարգանայ, ինչով պահպանէ իր գոյութիւնը...»: Ուղիղ է, այդ խօսքերում կայ մեծ ճշմարտութիւն, բայց միթէ վհատելու ժամանակ է, միթէ բարոյական ոյժը հասարակութեան մէջ այնքան թոյլ է, որ նա հենց առաջին դժուարութեան հանդիպելիս ընկճվում, թմրում է...

Երևոյթը տխուր է, նոյն-իսկ յուսահատական է՝ երբ հասարակական կեանքը մեռած է, իսկ նրա առանձին անդամները, հաճարեա բոլորը, տեսնում են այդ, կարծես զգում են չարիքը, տեղն ընկած ժամանակ պախարակում են նոյն-իսկ այդ մեռելային դրութիւնը, բայց խօսքից գործի անցնել, միասին գործել չեն կարողանում, միշտ խոյս են տալիս: Ի՞նչ է պատճառը: Անկեղծ չէ դրանց զայրոյթը: Մտքը որտեղ կամենաք, խօսեցէք այստեղ ում հետ ուզում էք—դուք ամեն տեղ կը գտնէք այդ տեսակ զայրոյթի նոյն-իսկ ամենախիստ արտայայտումը, բայց մարդկանց մէջ կապ չը կայ, գործ չը կայ... Բացատրել այս երևոյթը կարելի է երեք բառերով. փոքրոգութիւն, անհամերաշխութիւն և... կեղծաւորութիւն: Այդ երեք տգեղ յատկութիւնները մեր Դէրբէնտի հասարակական կեանքը հասցրել են այսքան ստոր աստիճանի:

Առօրեայ եսական մանր-մունր հաշիւներում դէրբէնտցին առանձին տեղ է բռնում. ամբողջ օրը վազում, ապրանք տանում, ապրանք բերում, առնում, ծախում, խաբում, սուտ երդվում, մամոնայի առաջին ծունր դնում—ահա թէ որտեղ է նա միայն ցոյց տալիս իր ընդունակութիւնը... Բայց հրաւիրեցէք նրան հասարակական գործի,—նա քիթ ու պռունկը կը ծռէ, աչքերը կոլորէ, նոյն-իսկ կը փորձէ ծաղրել ձեզ և այդպիսով ազատվել ձեր ատելի պահանջից...

Ահա դրութիւնը:

Ս. Քարտաշեանց

ՆԱՄԱԿ ԹԷՈԴՈՍԻԱՑԻՑ

—

Մարտի 30-ին

Մարտի 28-ին Բերբերեանին պատկանող «Նբրոպա» հիւրանոցում կայացաւ հանգուցեալ Ղ. Բերբերեանի կտակատարների տարեկան հաշէտուութեան ժողովը, ներկայութեամբ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի: Ներկայ էին մօտ 15 հոգի: Երևի ընթերցող հասարակութեանը յայտնի է, որ հանգուցեալ Ղ. Բերբերեանը բոլոր իր անշարժ կայքը, որ մօտ 200,000 ռուբլի արժողութիւն ունի, կտակել է հայ ազգին, այսինքն, այդ կայքից ստացած արդիւնքը, մինչև մի յայտնի դրամագլուխ դառնալը, պէտք է գործադրվի հայ երիտասարդների զանազան դպրոցական հաստատութիւնների մէջ ուսում առնելու վրա և Թէոդոսիայի հայ չքաւոր դասակարգի կարիքները հոգալու վրա:

Ժողովը բացեց կտակակատարներից մէկը պ. Ց. Սելինեան, կարդալով 1898 թուի յունվարի 1-ից մինչև 1899 թուի յունվարի 1-ը հաշիւը: Այս մէկ տարվայ ընթացքում մուտք է եղել 14450 ր. 70 կոպ. իսկ ծախս 13696 ր. 37 կոպէկ, ուրեմն առձեռն դրամար առ մէկին յունվարի 1899 թ. մնում է 754 ր. 33 կոպէկ: Հանգուցեալ Բերբերեանի պարտքից մինչև 1899 թուի յունվարի 1-ը մնացել է 20046 ր. 94 կ.: Ստանալիք գումարներն են՝ 14567 ր. 57 կոպ. ապահովված մուրհակներով, 5780 ր. 18 կոպէկ՝ կասկածելի մուրհակներով, և 985 ռուբլի 38 կոպէկ անդառնալի ստանալիքներ:

Խորէն եպիսկոպոս Ստեփանէ ասաց. «ցանկալի է որ տարեկան այս ժողովները յօժարութեամբ գումարվէին և սակաւամարդ չը լինէին: Սրանից երևում է թէ որքան անտարբեր է ժողովուրդը դէպի հասարակական շահերը: Այս անտարբերութիւնից գուցէ գործը այն դրութեան հասնի, ինչ դրութեան որ հասել է Խալիբեան ուսումնարանին կից մօտ 4 դեսեատին հողը, այսինքն դպրոցը զրկվել է մօտաւորապէս 100,000 ռուբլուց: Եւ այս բոլորը մեր անտարբերութիւնից: Յօժարութեամբ ժողովներին ներկայ գտնվելը կը լինէր յարգանքի նշան թէ դէպի հանգուցեալը և թէ դէպի կտակակատարները, որոնք յամենայն դէպս աշխատում են մինչև անգամ ուրիշ քաղաքներից գալով՝ ներկայ գտնվելու ժողովներին և հաշիւներ ներկայացնելու: Թեր և դէմ կարծիքներ չը կային: Ժողովականները իրանց ստորագրութեամբ վաւերացրին հաշիւը. ժողովը վերջացաւ մայիսի 3-ին երեկոյեան:

Նախկին Խալիբեան դպրոցի մօտ գտնվող գետինը, որ յիշատակեց Խորէն սրբազանը՝ ամենալաւ դիրք ունեցող տեղերից մինն է: Քաղաքը տարածւում է դէպի այդ հողը, որ գուցէ ժամանակին աւելի արժէք ունենայ: Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարութիւնը նոր զարթնելով ուղարկել է յայսորդին՝ գործերին ուղղութիւն տալու, բայց, եթէ չենք սխալվում, արդէն ուշ է. քաղաքը սեփականացրել է:

Ս. Խանոյեան

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

—

Ապրիլի 6-ին

Նախկին նամակներս մէջ յիշել էի, որ մեր քաղաքի Նաւահանգիստը մեծացնելու և բարեփոխելու գործը կրիայի քայլերով է առաջանում, չը նայած որ հարկաւոր գումարներն արդէն պատրաստ են, իսկ ծրագիրները հաստատված: Այս դանդաղութեան պատճառներից մէկն էլ երկաթուղու վարչութիւնն էր, որ պիտի հեռացնէր երկաթուղու գծի մի ճիւղը, որ տանում է դէպի Նաւահանգստի հիւսիսային պատը, ծրագրած տարածութիւնից դուրս: Սակայն չունենալով այդ արտակարգ ծախսի համար որոշած գումարը, որ հաշւած է մօտ 28 հազար ռուբլի՝ չէր կարողանում բաւարարութիւն տալ ծրագրի այդ կէտին:

Այժմ արդէն սկսված են կանոնաւոր աշխատանքները, որոնց սկզբնաւորութեան օրհնութեան հանդէսը կատարվեց ամսիս 4-ին բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ: Հանդէսին ներկայ էին բացառապէս քաղաքի ձայնաւորները և մի քանի պաշտօնական անձինք:

Հանդէսը, մի անհասկանալի պատճառով՝ ընտանեկան բնաւորութիւն էր կրում, որովհետև քաղաքային վարչութիւնը տոմսակներ էր ուղարկել այնպիսի անձանց, որոնք Նաւահանգստի բարգաւաճման գործի հետ ոչ մի առնչութիւն չունեն, և ընդհակառակն այն մարդիկ, որոնց համար այդ հարցը կենսականի չափ նշանաւոր է՝ բացակայ էին:

Ո՛չ մի պաշտօնական յայտարարութիւն այդ մասին, ոչ մի զեկուցում չը կար. և եթէ հանդէսը կատարվեց խուռն բազմութեան ներկայութեամբ՝ դրա պատճառն այն էր, որ նոյն առաւօտը կամ նախորդ օրը մէկը միւսից լսել էին և շտապել տեսնելու, թէ ինչ է կատարվելու Նաւահանգստում:

Ո՛չ յոյն, ոչ հայ և ոչ ռուս ինտելիգենցիան արժան չը համարվեց ներկայ լինելու այդ մեծ օրին, որ Փօթիի կեանքի մէջ դարագլուխ պիտի լինի. ներկայ ըէժիմի գլխաւորները չեն էլ մտածում շահագրգռել ինտելիգենցիայի ուշադրութիւնը դէպի քաղաքային գործերը, և մի կամայ հիասթափութիւն է տիրում մարդուս, երբ տեսնում է, որ այդ ինտելիգենցիան իր ժամանակն սպանում է սրճարաններում և հիւրանոցներում:

Հանդէսը վերջանալուց յետոյ, հրաւիրածները դիմեցին դէպի նախաճաշի սեղանները. ժամի 1-ն էր. սակայն ասիական սովորութեամբ, նախաճաշը ճաշի փոխարկվեց, և քաղաքիս հայրերը ուրախ տրամադրութեամբ ցրվեցին ժամը 8-ին երեկոյեան:

Նաւահանգստի գործերի ղեկավար ինժէներ Սկարժինսկի, որ ի պաշտօնէ պիտի ներկայ լինէր հանդէսին՝ հեռացաւ գնաց, թողնելով շատերին կասկածի մէջ. ենթադրում են, որ անբաւական մնաց քաղաքի հայրերի հոգատարութիւնից:

Սակայն թողնենք այս ամենը և դառնանք բուն գործին: Ծրագրած է լայնացնել նաւահանգիստը հիւսիսային պատից, որի մի մասը պիտի քանդվի և նորից չինվի այլ ուղղութեամբ, և այդ ծրագրով որոշված է 10 շոգենաւի տեղ ունենալ հիւսիսային պատի տակ:

Այս հանգամանքն այնպիսի կարևոր նշանակութիւն ունի, որ բացի ժամանակ վատնելուց, շոգենաւերը ենթարկված չեն լինի բնութեան քմահաճոյքին. միանուագ կարող են բեռ վերցնել 10 շոգենաւ, մինչդեռ այժմ երեք շոգենաւ կարելի է բարձել միայն:

Եթէ կէտ առ կէտ լրացնեն նոր նաւահանգիստի ծրագիրը՝ Բաթումի նաւահանգստի հետ կարելի է մրցել արտահանութեան տեսակէտից:

Ստ. Մաղմանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան առաջիկայ ընդհանուր ժողովում կը քննվի նոր առաջարկ ընկերութեան անդամների ստանալիք գրքերի մասին: Ինչպէս յայտնի է՝ ընկերութեան իւրաքանչիւր անդամ ներկայումս ստանում է հինգ բուբլու գիրք, իսկ նոր առաջարկով նրան պիտի կարողութիւն տրվի ստանալ ընկերութեան յայտնի տարում հրատարակած բոլոր գրքերը: Ընկերութիւնը վերջին տարիների ընթացքում հրատարակում էր տարեկան միջին թւով 5—6 ռուբլու, իսկ առանձին դէպքերում մինչև 10 ռուբլու գիրք. այնպէս որ ընկերութեան անդամները կարող կը լինեն ստանալ այժմեան 5 ռուբլու արժողութեան գրքերի փոխարէն 5—10 ռուբլու գիրք: Եւ այս հանգամանքը չէ կարող անձեռնտու լինել ընկերութեան համար, որովհետև ընկերութիւնը իր գրքերի վաճառման միջոցին վիճում է 25—30%՝ երբ գրքերի գինը վճարվում է կանխիկ, իսկ անդամավճարը նոյն կանխիկ վճարման մի ձև է:

—

Նորայր Բիւզանդացի, որ տպագրում էր «Մշակի» մէջ մի շարք յօդուածներ Խորենացու պատմութեան մասին՝ ստիպված եղաւ ընդհատել իր գրութիւնը ընտանեկան դժբախտութեան, այն է իր ամուսնու հիւանդութեան և մահվան պատճառով:

—

Ռուսաստանի նոր ձեռք բերած երկրում, Պօրտ-Արտուրի ամբողջ ծովափում, գտնվեցին ոսկու հանքի նշաններ: Ցատուկ արշաւախումբ, որ զբաղված է հանքերի հետազօտութեամբ, գտել է ոչ միայն ոսկու աւազ, այլ և երակներ: Ոսկու առատ հանքեր գտնվում են և Օխոտսկի ծովի ափերում:

—

Լրագիրներում տպված է հետևեալ պաշտօնական յայտարարութիւնը. «Ցայտարարութիւն Կիևվի, Պոդոլ'սկի և Վոլինսկի գեներալ-նահանգապետ և զօրքերի հրամանատար Դրագոմիրովի, հրատարակված՝ խստացրած պահպանութեան վերաբերեալ Կանոնադրութեան 15-րդ յօդուածի և 16-րդ յօդուածի 2-րդ կէտի հիման վրա: Ցայտարարում եմ ընդհանուրի գիտութեան համար.—1) Որևէ փողոցային ցոյցեր և ժողովրդի որևիցէ համախմբումներ Կիևվի փողոցներում, հրապարակներում, բուլ'վարներում ու պարտէզներում, նոյնպէս և երկաթուղու կայարանում (առանց, ի հարկէ, ճնշելու ճանապարհորդների սովորական գնացքները, ինչպէս և առևտուրը շուկաներում) ամենախիստ կերպով արգելում եմ: 2) Խմբված ամբոխը կամ կարգի անհատական խանգարողները, ով էլ որ լինեն, պարտաւոր են, ոստիկանութեան հրաւէրի վրա, անմիջապէս և առանց հակառակութեան հնազանդել իշխանութեան պահանջին: 3) Նախազգուշացնում եմ, որ անհնազանդութեան դէպքում ստամբակները կարող են ենթարկվել օրէնքի բոլոր խստութեան, և միևնոյն ժամանակ, քաղաքացիական իշխանութեան պահանջով, զօրք կը կանչվի զէնքով գործելու համար: Կիևվի նահանգապետին յանձնարարում եմ՝ իմ այս յայտարարութիւնը քաղաքում հրատարակել և հարկաւոր դէպքերում նրան գործադրել առանց որևէ յապաղումի, թոյլ տալով նրան՝ յանցաւորներին ենթարկել այն պատիժներին, որոնք նախատեսված են խստացրած պահպանութեան վերաբերեալ Կանոնադրութեան 15-րդ յօդուածի 2-րդ կէտում: Կիևվ, 31 մարտի 1899 թ.: Իսկականն ստորագրել է գեներալ-նահանգապետ և զօրքերի հրամանատար գեներալ-ադիւտանտ Դրագոմիրով»:

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցին հետևեալ նոր գրքերը, բոլորը այս 1899 թուին տպագրված.—1) Գր. քահանայ Մատինեանցի Հաւատիլուռ (հէքիաթ), երկրորդ տպագրութիւն. փոքրադիր, 20 երես, գինը 5 կոպ. 2) Ս. Զելինսկու Բոյսերի գործածութիւնը Երևանի նահանգում. (արտատպած «Ազգագրական Հանդէսի» IV հատորից). մեծադիր, 28 երես. 3) Ս. Զելինսկու Ծրագիր հիւանդութեան և բժշկութեան մասին նիւթեր հաւաքելու. (արտատպած «Ազգագրական հանդէսից»), մեծադիր, 16 երես. 4) Վ. Հաուֆի Երիտասարդ անգլիացին. թարգմ. օր. Շ. Տ.—Ն., հրատար. Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան № 154. փոքրադիր, երես 42, գինը 5 կոպ., 5) Վ. Հաուֆի Հրէայ Աբնէրը, որ ոչինչ չէր տեսել. թարգմ. օր. Շ. Տ,—Ն., հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան № 155. փոքրադիր, երես 17, գինը 3 կոպ.:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Գարունը այս տարի շուտ բացվեց. վարուցանքը գաւառի մեծ մասում արդէն սկսվել է: Տիֆը գիւղերում վերջանում է. սակայն մի քանի օր առաջ քաղաքին մօտ մի երկու գիւղում դեռ հինգ հոգի կային՝ տիֆով հիւանդ: Քաղաքում էլ ծաղիկ հիւանդութիւն է երևացել, որը, բարեբախտաբար, քիչ զոհեր է տանում»:

—

ԲԱԼԱԽԱՆԻՑ մեզ գրում հետևեալ. «Այս տարի 2-ին Բագուի հայոց դերասանական խմբի անդամները, մասնակցութեամբ օրիորդ Մարի-Հրանոյշի, այստեղ, Բէկէնդորֆի կլուբի դահլիճում, ներկայացրին «Բաղդասար Աղբար» կոմեդիան և «Ծերուկը հանաք է անում» վոդեվիլը: Տոմսակները նախօրօք վաճառված էին: Ներկայ էր խուռն բազմութիւն գործակատար և արհեստաւոր դասակարգից: Այս անգամ էլ մեր կառավարիչները, երևի շատ մեծ-մեծ գործերով զբաղված լինելով՝ աչքի էին ընկնում իրանց բացակայութեամբ: Դերասաններից պ. Վրոյը իր կենդանի խաղով, Բաղդասար-աղբօր դերում, հանդիսականներին մեծ զուարճութիւն պատճառեց: Շատ աջող էր և պ. Ստեփանեանի խաղը փաստաբանի դերում: Օրիորդ Մարի-Հրանոյշ տիկին Շուշանիկի դերում, մի քանի կէտերում փոխանակ լալու, ծիծաղում էր և դերը փչացնում: Մուտքը սպասածից աւելի էր: Վաղուց պէտք էր, որ Բագուի հայ դերասանական ընկերութիւնը, հոգ տանելով և Բալախանիում ապրողների մասին, մի քանի ներկայացումներ էլ այնտեղ տար, ընտրելով բանաւոր և արհեստաւոր դասակարգին մատչելի պիէսաներ: Մեր նաւթի, մրի և ծանր աշխատանքների մէջ թաղված, մեքենայացած ամբոխը, գոնէ բախտ կունենար քիչ էլ իր հոգեկան և մտաւոր պահանջներին բաւարարութիւն տալու: Մեր կըրեսոնները փողի ոյժով ամեն բանի հասնում են: Պէտք է մտածել և այն հաղարաւոր ընտանիքների մասին, որոնց վրա մի անգամ քաղաքի թատրոն գնալը տասնեակ ռուբլիներ է նստում: Փառք Աստուծոյ, որ ներկայացման համար Բէկէնդորֆի կլուբի դահլիճը իր յարմարութեամբ Թաղիեվի թատրոնից պակաս չէ:

«Ժամանակէ մը ի վեր,—կը գրեն մեզ,—անգլիական կարգ մը թերթեր կարծես իրենց բան գործ ըրած են՝ մթին գոյներով նկարագրել Վանայ հայերուն տնտեսական կացութիւնը, իբր թէ թշուառութիւնը իր ծայրայեղութեան հասեր է հոն, ժողովրդեան մեծագոյն մասը սովամահ կ'ըլլայ եղեր՝ տեղական իշխանութեանց անփութութեան պատճառով: Անուրանալի է որ սով երևան եկած է նահանգին զանազան մասերուն մէջ: Այս բանը կրնայ պատահիլ ամէն տեղ, Վան ինչպէս Հնդկաստան, կամ երկրագնտիս միւս մասերուն մէջ, երաշտութեան կամ ուրիշ պատճառներով: Բայց այնպէս մը հաւատացնել տալ ուզելը թէ կառավարութիւնը այն երկրին, որուն մէկ անկիւնը այդ աղէտը երևան եկած է՝ անտարբեր կը գտնուի անոր ծաւալման հանդէպ, իրողութիւնները դիտմամբ խեղաթիւրել կամ անգիտանալ կը նշանակէ, այնպէս որ պէտք չէ այս ենթադրութեանց մէկուն կամ միւսին մէջ փնտռել այն անկողմնակալութիւնն ու արդարութիւնը որոնք պէտք է առաջնորդ ըլլան իրենց պարտականութեան հոգածու լրագիրներուն:

«Եւ արդարև, ճշմարտութենէ չչեղելու համար, կը բաւէ լաւ տեղեկութիւն քաղել իրողութեանց վրայ զանոնք հրատարակութեան տալէ առաջ, վասն զի՝ եթէ այդպէս չընեն՝ սխալը ու աղարտանքը կ'անհետանան, ճշմարտութիւնը երևան ելլելուն պէս: Միթէ մեզի՞ կիյնայ այս տարբերական սկզբունքները քարոզել Լոնտոնի մեր պաշտօնակիցներէն անոնց՝ որոնք կը չեղին անոնցմէ, ի վնաս իրենց: Եթէ գէթ նեղութիւնը յանձն առնէին սխալներն նշմարելու և իրենց թերթերուն մէջ տպած սխալ լուրերնին հերքելու՝ պարզապէս խորհուրդ պիտի տայինք անոնց բան մը հրապարակ չնետել առանց անոր ճշդութիւնը ստուգելու և չյայտնել որևէ կարծիք որ ճշմարտութեան վրայ հիմնուած չըլլայ:

«Արդ, Վանայ լուրերուն գալով, կը բաւէ ըսել թէ այնտեղ երևան եկած սովը նախորդ տարուան հունձքերուն անբաւականութեան հետևանքն է միայն. բայց, կայսերական կառավարութիւնը իմանալուն պէս՝ հարկ եղած բոլոր միջոցները ձեռք առաւ աղէտին առաջքը առնելու համար, նեղութեան մէջ գտնուող ժողովուրդին հայթայթելով այս տարուան համար պէտք ունեցած արժիքը ինչպէս նաև յառաջիկայ տարուան ցանքին համար պէտք եղած սերմանելիքը: Այս նպատակով, վեհ. սուլթանը անմիջական հրամաններ տուաւ, որոնք գործադրուած են այս պահուս: Անոնք որ դեռ կը հաւատան և կամ հաւատացնել կուզեն թէ թշուառութիւնը և սովը կը շարունակեն աւերել յիշեալ նահանգին գաւառները, թող ապահով ըլլան թէ այս անմիջական և ազդու տնօրինութիւններուն շնորհիւ՝ ծաւալման որևէ վտանգ անհետացած է»:

Մենք միայն գոհ կը լինենք, եթէ իրողութիւնը ճիշդ համապատասխանէր թիւրք կառավարութեան այս «հայրական խնամքներին»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt» լրագիրը, իր ստացած մի մասնաւոր հեռագրի վրա հիմնվելով, ասում է, որ Հաագայում տեղի ունենալիք կոնֆերենցիայի հրաւէրը ընդունված է առանց առարկութիւնների միմիայն երեքպետան դաշնակցութեան կառավարութիւնների և մի քանի փոքր պետութիւնների կողմից: Իսկ Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան և Թիւրքիան ներկայացրել են զանազան առարկութիւններ: Անգլիան յայտնել է, որ թոյլ չի տայ սահմանափակելու իր ծովային սպառազինութիւնը. Ֆրանսիան պահանջում է, որ թոյլ տրվի նրան պահպանել ջրասոյզ տորպեդներ: Թէ ինչումն է կայանում միւս երկու պետութիւնների պայմանը՝ հեռագիրը դրանց մասին ոչինչ չէ ասում:

—Պրոֆէսսոր Ֆոն-Շտէնդէլ, որ Գերմանիայի կողմից նշանակված է ներկայացուցիչ Հաագայի կոնֆերենցիայում՝ յետադիմական բէակցիոներ է: Թողնելով մի կողմ նրան իբրև պրոֆէսսորի, հասարակական գործիչի՝ ներկայ իր պաշտօնում նա անհասկանալի է: Խաղաղութեան կոնֆերենցիայի դէմ ժղած իր կուռւմ, այդ դիտնականը, «Курьеръ» լրագրի Միւնխենի թղթակցի ասելով, չէ ցոյց տուել ոչ մի նշան ոչ խելքի և ոչ լայն հայեացքի. չէ կարելի ասել նաև, որ նա առանձին պատկառանք լինի զգում դէպի պատմական փաստերը և զգուշանում յեղաշրջումներից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՆԻ ՍՈՎԸ

—

Թիւրքաց «Սէտվէթ» լրագրում տպված է հետևեալ յօդուածը, որ բերում ենք «Արևելքից» և որ, անկասկած, ներշնչված է Թիւրք կառավարութիւնից:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

7 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Այս օրերս Պետերբուրգում կայացաւ նորին բարձրութեան Զերնոգորիայի ժառանգ իշխան Դանիէլի նշանադրութիւնը նորին

բարձրութեան պրինցէսա Իւտտա Մեկլէնբուրգ-Ստէրլիցկու հետ։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Ապրիլի 7-ին, գիշերը, Ռոստով-Վլադիկաւկազեան ճանապարհի 377 վերստի վրա ապրանքատար գնացքի չոգեկառքը դուրս եկաւ գծից, որովհետև ճանապարհը նստել էր։ Մարդիկ վնասված չեն։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրին հեռագրում են Պէկինից. «Հիւսիսային երկաթուղու հարցին վերաբերմամբ՝ գործի դրութիւնը չէ լաւանում։ Զանգ—Ի, որը փողով է ձեռք բերել ճանապարհի դիրեկտորի պաշտօնը, ռոճիկ չէ ստանում, և հէնց այդ պատճառով էլ օգուտ է քաղում ճանապարհի կառավարութեան եկամուտներից և նրանով, որ ստիպում է երկրորդ տեսակի ածուխ գործածել այն ածխահանքերից, որոնք իր սեփականութիւնն են կազմում։ Այսպիսի անբաւարար կառավարութեան պատճառով, Չինաստանը անկարող եղաւ երկաթուղային փոխառութեան վերջի երեք ամսվայ տոկոսները վճարել, նոյնպէս անկարող եղաւ կատարել իր պարտաւորութիւնը՝ վճարել երկաթուղու բոլոր եկամուտը Գոնկոնգ-Շանխայեան բանկի ընկերութեան։ Զանգ—Ին արձակելու պահանջը կարող է հիմնաւոր համարվել, և այժմ էլ այդ հարցը քննվում է բրիտանական միսիայումը»։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Սամոեան յանձնաժողովի անդամները մտադիր են մնալ Սամոա կղզու վրա մօտաւորապէս չորս ամիս, և ապա վերադառնալ Վաշինգտոն, որտեղ միասին կը մշակեն եզրակացութիւնները։

ՊԱՐԻԶ։ Պիկար, շարունակելով իր ցուցմունքները՝ հաստատում է, որ մինիստրութեանը դոկումենտներ հաղորդելը շարունակվում էր նաև Դրէյֆուսի բանտարկութիւնից յետոյ։ Վկան հաստատված է, որ բոլոր դոկումենտները, որոնք լոյս ընկան Հանրիի կեղծումից յետոյ և նրան են վերաբերում՝ դարձեալ կեղծ են։

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ։ Իբրև օգնական քաղաքական ներկայացուցիչների, Հաագայում լինելիք կոնֆէրէնցիայում, Նորվեգիայի կողմից նշանակված են արուեստագիտական ներկայացուցիչներ՝ Օդելստինգի նախագահ, գործարանի տէր Կոնոֆը և գեներալ-սենատոր Տաուլով։

Կ. ՊՕԼԻՍ։ «Agence de Constantinople» հաղորդում է, թէ այն լուրը, իբր թէ Պօլսում երիտասարդ Թիւրքիայի խլրտումների առիթով, շատ ձերբակալութիւններ են կատարված մուսուլմանների մէջ՝ զուրկ է որևէ հիմքից։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Շվեդիայի պետական նոր փոխառութիւնը, 36 միլիոն գուլդարի՝ նշանակված է պետական բանկի միջոցները աւելացնելու համար, և ինչպէս հաստատում են՝ ծածկված է գլխաւորապէս օտարերկրեայ մի խումբ բանկիրների կողմից։

ՊԱՐԻԶ։ Այսօր վճռաբեկ դատարանը ժողովվեց, Մազօի նախագահութեամբ, և դռնփակ քննեց զանազան նախապատրաստական հարցեր, Դրէյֆուսի գործին վերաբերեալ։

8 ապրիլի

ՊԱՐԻԶ։ Փորոնները տէրերի հետ համաձայնութիւն կայացնելով՝ գործադուլը դադարեցրին։

Ուղղիչ ոստիկանութեան դատարան։ Ժիլ Լեմէտրը լինելն է պաշտպանում իրան, արդարացնելով լիգայի կանոնադրութիւնը և գործողութիւնները։ Միւս պաշտպանողական ճառերից յետոյ՝ մեղադրվածներից հինգը դատապարտվեցին 16 ֆրանկի դրամական տուգանքի, վճարումը յետաձգելու օրէնքի գործադրութեամբ։

ՄԱԴՐԻԴ։ Մանիլայից ստացված տեղեկութիւններին նայելով՝ մի փախստական սպանիացի գերի ասում է, թէ ապստամբներն ունեն 50,000 հրացան և 200 թնդանօթ. ռազմամթերք էլ բաւականաչափ կայ։ Երկրի ներսում ամեն ինչ խաղաղ է. գիւղական աշխատանքները շարունակվում են. կենսական մթերքները առատ են։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս Նիւ-Յօրկից հեռագրում են՝ Standard Oil Company գրեթէ ձեռք բերեց Դէլի և Գագգինի վաճառատունների Անակօնտի նութային հօրերի բաժինը և ձգտում է ձեռք բերելու այդ ամբողջ ձեռնարկութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԶԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վենէրական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
123—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՀՐԱՒԷՐ

Ամսիս 11-ին, առաջիկայ կիրակի օրը, Ս. Պատարագից յետոյ, 12 ժամին, Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցու բարեպաշտ ծխականները երկրորդ անգամ հրաւիրվում են յիշեալ եկեղեցին՝ նոր երէցփոխ ընտրելու։

Գործ. ա. ժ. եկ. Հ. Տփխիսի՝
Զաքարիա քահանայ Զարդեղեանց
1—2

ՆՈՐ ԲԱՑ ԱՐԱԾ
ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ
Է. Գ. ԼԱՆԿՕՒ
Դվորցովայա փողոց, Սարաջևի նոր տան մէջ, ստացած է մեծ քանակութեամբ պաստառներ Ռուսաստանի և արտասահմանի յայտնի ֆիրմաներից, և զանազան զարդարանքներ։
Գները ամենամատչելի են և առանց մրցութեան։ (ռ. և. ռ.) 1—3

Օրիորդ Մանէ Հախվերդեանցի կարգադրութեամբ, ի յիշատակ իր հանգուցեալ հօր, բժ. Գէորգ Հախվերդեանցի, ուղարկված է—Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցին, սուրբ Էջմիածնայ ճեմարանին, Երևանի, Շուշուայ և Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցներին, իւրաքանչիւրին 24 օր. Մկ. Էմինի Ընտիր հատուածներ երկից, գրոց լեզուում հմուտ աշակերտներին նուիրելու։ 1—1

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
գրադարան-ընթերցարանը
(Միջին փողոց, տ. Տէր-Աստուրովի, Ագելխանեանի մագազինի դիմաց), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9։ Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը։ Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար։ 30—50

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ ապրիլի 10-ին, ժամը 1-ին, Քաղաքային Վարչութեան տան մէջ լինելու է աճուրդ՝ կապալով տալու քաղաքապատկան մի կտոր հող, որ գտնվում է X-դ քաղաքամասում, նոր մաքսատան հանդէպ, և որը պարունակում է իր մէջ 600 քառ. սաժէն, փայտի և շինութեան փայտեղէնի պահեստի համար։ Պայմանները կարելի է տեսնել Վարչութեան մէջ ամեն օր։ 3—3


Գիւղատնտեսական գործիքներ
եւ մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
250 նկարով։ Գինն է 50 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (ե. ռ.) 30—50

ԷՓԱՆ, ԼԱՒ ԵՒ ԺԱԹԱԿՈՎ
„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"
Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գօրով. պրոսպէկտ, I-ին դիմնազիայի հանդէպ։
Ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխանների գարնանային և ամառվայ պատրաստի հագուստներ։ Գների էժանութեան և ապրանքի լաւութեան մասին պ. պ. գնողները կարող են համոզվել, անձամբ յաճախելով մեր խանութը։
4—10

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ առ 1-ն ՓԵՏՐՎԱՐԻ 1899 Թ.

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բաժիններում	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ) . . .	110,290—22	314,813—38	425,103—60
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում	253,717—94	760,200 —	1,013,917—94
3. Զեղչ.(Disconto)մուրհ. երկու ստորագրութ.	3,552,158—38	4,972,220—04	8,524,378—42
4. Զեղչ. մուրհակաց մի ստորագ. ապահովված տոկոս. թղթ.	444,249—48	— —	444,249—48
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրոն. և այլն	67,109—55	22,708—80	89,818—35
6. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութ. ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,266,992 —	886,502—94	2,153,494—94
բ) » ոչ » » »	899,343 —	43,135 —	942,478 —
գ) Ապրանքների	49,500 —	826,668 71	876,168—71
դ) Ոսկու և արծաթի	— —	8,313 71	8,313—71
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	2,135,888—77	260,719—25	2,396,608—02
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	339,979—40	33,671—26	373,650—66
9. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	415,699 33	— —	415,699—33
բ) Բանկի հաշիւը (Nostro)	1,179,657—94	— —	1,179,657—94
10. Բաժինների հաշիւը կենտրոն. վարչ. հետ.	2,879,630—06	— —	2,879,630—06
Կենտրոնական վարչ. հաշիւը բաժին. հետ	— —	3,024,849 27	3,024,849—27
11. Պայմանաժամն անցուցած փոխառութեան	25,965 —	59,572 —	85,537 —
12. Բողոքված մուրհակներ	4,000 —	4,816—45	8,816—45
13. Ընթացիկ ծախսեր	8,488—80	8,578—83	17,067—63
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր . .	2,416—10	5,237—85	7,653—95
15. Յետ ստացուելիք ծախսեր.	12,022—45	11,633—76	23,656—21
16. Գնումն և վաճառումն արժեթղթերի ըստ յանձնարարութեան	300,437—50	— —	300,437—50
17. Անշարժ կալուածք	— —	69,324—98	69,324—98
Ր. Ա.	14,447,222—22	11,312,966—23	25,760,188—45

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բաժիններում	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ (10,000 բաժնետոմս ՝ 200 ռուբլ)	2,000,000 —	— —	2,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ.	1,000,000 —	— —	1,000,000 —
3. Առանձին մասնաւոր ֆոնդ	14,693—80	— —	14,693—80
4. Դրամագլուխ շինվածքի անշարժ կալուածքի.	— —	6,307—68	6,307—68
5. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	4,948,778—39	4,282,945—94	9,231,724—33
բ) ց'Պահանջ.	181,612—10	192,910—65	374,522—75
գ) Ընթացիկ հաշիւ, հատարակ	1,592,573—96	3,533,241—60	5,125,815—56
դ) » » պայմանաւոր . .	— —	142,601—87	142,601—87
6. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro).	992,048—81	— —	992,048—81
բ) Բանկի հաշիւը (Nostro)	121,854—46	— —	121,854—46
7. Բաժինների հաշիւը կենտրոնական վարչութեան հետ	— —	2,890,467—60	2,890,467—60
Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ.	2,896,064—89	— —	2,896,064—89
8. Բանկայի բաժնետոմսերի անվճար կարոնների հաշիւը.	4,558—40	— —	4,558—40
9. Զը վճարված տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	113,518—42	66,202—31	179,720—73
10. Ստացված տոկոսներ և յանձնարարականներ	96,077—58	106,927—80	203,005—38
11. Փոխանցիկ գումարներ.	81,513—15	91,360—78	172,873—93
12. Արդիւնք 1898 թ.	403,928—26	— —	403,928—26
Ր. Ա.	14,487,222—22	11,312,966—23	25,760,188—45

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Апрѣля 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.